№ 111 ՈՒՐԲԱԹ ՄԱՑԻՍԻ 25 1901 ՈՒՐԲԱԹ ՄԱՑԻՍԻ 25 № 111

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երբ կը ձեռնարկվեն գործնական միջոցներ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարոյական անանկութիւն. Ամբոխ եւ ժողովուրդ. Նոր մայրերը. Նամակ Երեւանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր հրատարակութիւններ Վենետիկում։

ԵՐԲ ԿԸ ՁԵՌՆԱՐԿՎԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

—

Տասնեակ տարիներ խօսվում է մեզանում արհեստագիտական ուսման մասին, սակայն մինչև այժմ չունենք լուրջ կրթական հիմնարկութիւններ, որոնք մատակարարէին մեր երկրին հմուտ և պատրաստված արհեստագէտներ։ Մինչդեռ օրէցօր մեծանում է միջազգային տնտեսական մրցութիւնը և այն ժողովուրդները, որոնք զինված չեն կատարելագործված արհեստներով և գիտութեամբ, պէտք է ընկճվեն այդ մրցութեան ասպարէզում և տեղի տան աւելի ուժեղ ազգերին։

Նոյն իսկ այնպիսի առաջնակարգ ազգեր, ինչպէս են անգլիացիները, չը նայելով իրանց բազմաթիւ գործարաններին, իրանց զանազանատեսակ դպրոցներին, իրանց համաշխարհային դիրքին, իրանց դարաւոր փորձերին, երկիւղ են կրում, որ մի գուցէ նրանք վնաս կրեն այն ուժեղ մրցութիւնից, որ սկսել են վերջին տարիներս գերմանացիները և ամերիկացիները արդիւնաբերութեան ասպարէզում։ Արդարև անգլիական ապրանքների հետ միասին համաշխարհային վաճառականում ամեն տեղ սկսել են երևալ մեծ քանակութեամբ գերմանական և ամերիկական ապրանքներ, որոնք յարմարեցրած են տեղական պահանջներին և ծախվում են մատչելի գներով։

Իսկ այդ ժամանակ մենք, որ ոչ մի լուրջ դեր չենք կատարում արդիւնագործութեան մէջ, չենք աշխատում նոյն իսկ քայլեր անել գոնէ փոքր ի շատէ առաջադիմութիւն կատարել մեր առտնին արհեստագործութեան մէջ և շարունակում ենք ապրել հին տնտեսութեան սահմաններում։

Ժամանակ է, վերջապէս, աւելի եռանդուն գործունէութիւն ցոյց տալու և ձեռնարկելու գործնական միջոցների։ Ամեն մի օրը, որ մենք կորցնում ենք, թուլացնում է մեր ոյժը և յետ է մղում մեզ մրցութեան ասպարէզում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

—

Ներկայ ժամանակը ընդհանրապէս գաղափարի, բարոյական սկզբունքների ժամանակ չէ, բայց ոչ մի տեղ, ոչ մի երկրում երևի չէ տիրում այն բարոյական անանկութիւնը, ինչպէս որ հայ բուրժուազիայի աշխարհում։

Վերջին 10—20 տարիների ընթացքում կապիտալիզմը զարգանալով մեզանում ստեղծեց մի քարափելի փչացած մթնոլորտ, որի մէջ լուծվում են էտիկայի այն սաղմերն էլ, որոնք գոյութիւն ունէին մինչև այդ մեր մէջ։

Բաղում կազմակերպվեց մի ուժեղ, նիւթապէս ուժեղ, կրթված եւ անկիրթ բուրժուազիայի դասակարգ, որի միակ դաւանանքն է—հարստանալը, միակ սրբութիւնն է—փողը. այդ գաղափա[illegible] զոհվում է ամեն ինչ, այդ նպատակին հ[illegible]ելու համար ներվում է ամեն միջոց,—նպատակը արդարացնում է միջոցը։

Ով որ ծանօթ է Բաղուի կեանքի հետ, նա գիտէ, որ այնտեղ ամօթ, արատ չէ համարվում գողանալը, կեղծելը, կեղեքել, հարստահարել խեղճին, ստորանալ, չողոքորթել ուժեղին, հարուստին։ Բաղումում միայն մի բան է ամօթ, անպատուաբեր համարվում—դա աղքատութիւնն է, որին անողորմ կերպով հալածում են մեր քաջ կրեսոսները։ Ոչ ոքի համար գաղտնիք չէ նոյնպէս, որ այնտեղ մարդու արժանաւորութիւնները գնահատվում են միմիայն նրա հարստութեան չափով, ինչ միջոցներով էլ որ լինի ձեռք բերված այդ հարստութիւնը, եւ այդ հարստութեան առաջ խոնարհվում են ամենքը։

Հարստանալու տենչը համաճարակ հիւանդութեան պէս տարածվեց մեր հասարակութեան բոլոր խաւերի մէջ եւ առաջացրեց այն մեծ հոսանքը դէպի Բաղու, որը կլանում է այժմ մեր երիտասարդ ոյժերը։ Մեր կրթված, ինտելիգենտ համարվող երիտասարդութիւնը տարէց-տարի ստուարացնում է հայ բուրժուազիայի կարգերը. ագահութեամբ նուիրվելով սպեկուլեացիայի, նա կորցնում է իր բոլոր լաւ հակումները, մեռնում է բարոյապէս, կորչում է իբրեւ հասարակութեան պիտանի անդամ։

Երբէք չէ կարելի համաձայնվել, որ հայերը ուրիշ ասպարէզ չունենալով, ստիպված են պարապել միայն արդիւնագործութեամբ եւ վաճառականութեամբ։ Ինչու՞ կրթված հայը չէ պարապում գիւղատնտեսութեամբ։ Որովհետեւ գիւղատնտեսութիւնը չի տայ նրան այն հսկայական տոկոսը, ինչ որ նաւթի ֆօնտանը, կամ մի ուրիշ ոչ պակաս շահաւէտ սպեկուլեացիա. նա չի բաւականանայ գիւղատնտեսի համեստ կեանքով, որովհետեւ նրա իդէալն է փարթամ կեանք, զեղխութիւն... Ճիշտ է, վերջերս մեր կրեսոսներից ոմանք սկսել են կալուածքներ գնել, բայց պէտք է ասել, որ նրանց այդ դէպքումն էլ առաջնորդում է զուտ վաճառականական ոգին։ Գիւղատնտեսութեամբ պարապելու համար չեն նրանք կալուածքներ գնում, այլ նեղ շահադիտական, սպեկուլեատիվ բնաւորութիւն կրող նպատակներով։

Ահա, ընթերցող, այսպէս օրէցօր աճում է մեր ինքնահաւան բուրժուազիայի թիւը, որի գոյութիւնը միայն արատաւորում է հայ ազգի անունը։ Ի՞նչ օգուտ, ազգային տեսակէտից, որ մենք կունենանք մի հարուստ դասակարգ, քանի որ նրա տուած բարոյական վնասը դամոկլեան սրի պէս կախված է մեզ վրա, քանի որ մենք ստիպված ենք օտարազգիների առաջ կարմրել, ամաչել եւ արդարանալ, որ այդ դասակարգը հայերի միայն փոքրագոյն մասն է կազմում, որ հայերի անագին մեծամասնութիւնը երկրագործներից է, որոնք ապրում են իրանց հալալ աշխատանքով, զեկավարվում են ազնիւ սկզբունքներով։

Թող ուրեմն մեր սակաւաթիւ ինտելիգենցիան չը մոռանայ իր երկրագործ եղբօրը, որը մեր երեսը պարզ է անում աշխարհի առաջ, թող չը զրկէ նրան իր բարոյական աջակցութիւնից, նպաստէ նրա մտաւոր, ուրեմն եւ տնտեսական բարգաւաճման, որպէս զի նա չը կարվի հողից ու զոհ չը դառնայ նոյն կապիտալիստներին, չը կորցնէ իր ֆիզիկական, բարոյական եւ տնտեսական կարողութիւնը։

Սօֆիա Դանիէլբէկեան

ԱՄԲՈԽ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

—

Ժամանակին մենք յայտնել էինք, որ մեր առաջնորդը դիմել է, ուր հարկն է, խնդրելով աղքատաց հոգաբարձութեան ծխականների ընդհանուր ժողովը դարձնել պատգամաւորների ընդհանուր ժողով։

Այժմ զոհունակութեամբ իմացանք, որ սրբազանի առաջարկութիւնը ընդունվել է։ Ողջունում ենք, ուրախ ենք։ Դա մեր առաջնորդի ամենագեղեցիկ գործն է եւ ահա թէ ինչու։

Վերջին երեք-չորս տարիները մեր ծխականների ժողովները անհամ, այլանդակ բաներ էին։ Նախ, համաձայն կանոնադրութեան, պէտք էր մի որոշ քանակութիւն, մօտաւորապէս մինչեւ 200 ծխականների ներկայութիւն։ Ամբողջ ժամանակից, Բառարանը տպվում է միայն 500 օրինակ եւ այդ քանակութեան կէսը արդէն վաճառված է, այնպէս որ գիրքը շուտով պիտի սպառվի։ Երկրորդ պակասութիւնն այն է, որ Բառարանը մաս-մաս նախ տպագրվում է «Բազմավէպում» եւ ապա արտատպվում։ «Բազմավէպը» փոքրիկ ամսագիր է եւ չէ կարող մեծ կտորներ տպել։ Մայիսի համարում տպված է բառարանից միայն 5 երես եւ դեռ Գ. տառը չէ վերջացել։ Այս հաշով քանի տարի պիտի ձգձգվի բառարանի ամբողջ տպագրութիւնը։ Ցանկալի կը լինէր, որ ս. Ղազարի վանքը վերացնէր այս մեծ անյարմարութիւնը։

Հ. Էփրիկեանը իր այս գեղեցիկ եւ պատուաբեր գործը գլուխ հանելու համար կարօտ է մեր հասարակութեան աջակցութեան։ Թող չը կարծեն թէ դրամական օգնութիւն հասցնելու հրաւէր ենք կարդում։ Ս. Ղազարի վանքը, ունենալով շատ համեստ եկամուտներ, շարունակում է իր հրատարակչական գործունէութիւնը առանց լալկան մուրացկանութեան դիմելու։ Ներկայ դէպքում պահանջվում է բարոյական աջակցութիւն։ Ահա ինչպէս։

Թիւրքաց եւ ռուսաց Հայաստանում կան շատ տեղեր, որոնց նկարագրութիւնները հրատարակված չեն, բայց սրանք պէտք է մտնեն Բառարանների մէջ։ Ուստի Հ. Էփրիկեան մի շրջաբերական նամակով դիմում է բոլոր գրաբէր հայերին, որ նրանք օգնեն իրան։ Դնում ենք այստեղ այդ նամակը, յանձնարարելով նրան մեր ընթերցողների առանձին ուշադրութեան։

Մեծապատիւ Տէր

Բնաշխարհիկ բառարանի յաջորդ պրակներն ալ փափաքելով ըստ կարելւոյն կատարեալ հրապարակ հանել, ձեր ազնուութենէն կը խնդրենք որ բարեհաճիք մեր հետեւեալ հարցմանց (անոնք որ ձեր քաղաքի կամ գիւղի կը վերաբերին) պատասխաններն գրել եւ ղրկել մեր հասցէին։

Մի եւ նոյն ժամանակ զմեզ մեծապէս նեղած հայ վարդապետին։ Հինն ու նորը, աւերակ ու կանգուն վանքը, մի խօսքով այն ամենը, ինչ աշխարհագրական տեղ է ներկայացնում եւ թողել է անուն, մտել է «Բնաշխարհիկ Բառարանի» մէջ։ Ինչ կասկած, որ բոլոր տեղերի մասին Հ. Էփրիկեանը չունի լիակատար տեղեկութիւններ։ Այդպիսի բան չէ էլ կարելի պահանջել։ Ուստի եւ անխուսափելի է պատահել Բառարանի մէջ այսպիսի բացատրութիւններ. «Աբնիա—գիւղ, Ախալքալաքի, 18 տուն բնակչօք», «Ագ-Դաշ—գիւղ Ճակատք (Այրարատ) գաւառի մէջ»։ Բայց դրա փոխարէն այն տեղերը, որոնք յայտնի են, ունեն հարուստ տեղեկութիւններ, նկարագրված են շատ մանրամասն կերպով, որքան այդ հնարաւոր է մի բառարանում։ Այսպէս, Անին գրաւում է 30 երես, Ախալցխան—8 երես, Ախալքալաքը—6 երես, Ալէքսանդրօպոլը—6 երես։ Նկարագրութիւնների մէջ չէ մոռացված անցեալը, իսկ ներկան շատ տեղերում լուսաբանված է նաեւ վիճակագրական տեղեկութիւններով։ Այս վերջին տեղեկութիւնները առատ են մանաւանդ ռուսաց Հայաստանում գտնվող տեղերի նկարագրութեան մէջ. հեղինակը ձեռքի տակ ունեցել է Ռուսաստանում լոյս տեսած պաշտօնական վիճակագրութիւնները։

Բառարանի մի մեծ առաւելութիւնն էլ այն է, որ նա պատկերազարդ է։ Պատկերների կողմից Հ. Էփրիկեանը շատ նպաստաւոր պայմանների մէջ է գտնվում. Ս. Ղազարի միաբանները վաղուց են սկսել պատկերազարդ տեղագրութիւններ տալ. բաւական է յիշել Հ. Ալիշանի «Այրարատ», «Սիսուան», «Սիսական», «Շիրակ» պատկերազարդ գործերը։ Ուրեմն բաւականաչափ պատրաստ պատկերներ կան Հ. Էփրիկեանի տրամադրութեան տակ։ Եւ Բառարանի պատկերները մեծ մասամբ հին են, արդէն մի քանի անգամ տպված։

Այժմ խօսենք այս գեղեցիկ գործի պակասութիւնների մասին։ Առաջին պակասութիւնն այն է, որ, ինչպէս իմանում ենք մեզ գրած երախտապարտ պիտի կացուցանէք, եթէ կամենաք ղրկել նաեւ ձեր քաղաքի կամ գիւղի ընդհանուր տեսարանի լուսանկարն, ինչպէս նաեւ եթէ նշանաւոր են՝ եկեղեցւոյ, վանքի եւ այլ հնութեանց եւ տեղական տարազներու լուսանկարներ։

Քաղաքի կամ գիւղի անունը։ Հիմնարկութեան վրա ինչ կը պատմվի։ Ո՞ր դաւառի մէջ կը գտնվի։ Ի՞նչ դիրք ունի (նրկարագրել)։ Քանի՞ տուն ունի։ Հայ բնակչաց թիւը որչափ է։ Հայք բնիկներ են թէ գաղթական (որ տեղերէն)։ Օտար բնակիչներ ունի՞, որչափ են եւ ինչ ազգէ։ Ի՞նչ դաւանանքի կը վերաբերին։ Հայք քանի՞ եկեղեցի ունին (իւրաքանչիւրի անունը, հիմնարկութեան տարին, արձանագրութիւն ունի՞, նկարագրել)։ Քանի՞ վարժարան ունի (անունները, հիմնարկութեան թուականները, աշակերտաց թիւը)։ Ի՞նչ հնութիւններ ունի։ Ի՞նչ վանքեր կամ ուխտատեղիներ ունի։ Տեղական արհեստները որո՞նք են։ Հայք ինչո՞վ կը զբաղին։ Գործածական լեզուն որ՞ն է։ Ինչ բերքեր ունի։ Վաճառականութիւնը ինչ վիճակի մէջ է։ Ի՞նչ պատմական դէպքեր ունեցեր է։ Մօտը ինչ լեռ կամ գետ կը գտնվի։ Շուրջը ինչ անուամբ հայաբնակ գիւղեր կը գտնվին։

Լիայոյս որ ձեր ազնուութիւնը կը փութայ կատարել մեր այս օգտաշատ խնդիրքն, կը կանխենք մեր խորին շնորհակալութիւնը։

Հասցէն է. P. Sukias Ephrikian Mekhithariste
St. Lazare VENISE (Italie)

«Բնաշխարհիկ Բառարանի» պէս բովանդակութեամբ եւ արտաքինով գեղեցիկ մի գիրքը կարող է պատուաւոր տեղ բռնել իւրաքանչիւր, նոյն իսկ խստապահանջ հայի սեղանի վրա։ Խորհուրդ ենք տալիք ձեռք բերել այդ գիրքը, մանաւանդ որ գինն էլ շատ մատչելի է. ամեն մի հատոր արժէ 1 ռուբլի 20 կոպէկ։ Կարելի է ձեռք բերել եւ Թիֆլիսի գրավաճառանոցներում։

Լ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

III

Բնաշխարհիկ բառարան

Հ. Էփրիկեանի այս աշխատութիւնը արժանի է առանձին ուշադրութեան։ «Բնաշխարհիկ Բառարան»—դա աշխարհագրական անունների մի հարուստ ժողովածու է։ Մինչեւ այժմ հրատարակվել են այդ գործի առաջին եւ երկրորդ հատորները, որոնք միասին կազմում են 320 մեծադիր, երկու սիւնակից բաղկացած երեսներ։ Այդ հատորների մէջ դեռ չէ վերջացել Ա. տառը. այս հանգամանքը արդէն ցոյց է տալիս, թէ որքան ստուար ու պատկառելի պիտի լինի ամբողջ աշխատութիւնը։ Մի աշխատութիւն, որ յիշեցնում է Վենետիկի այն ժամանակները, երբ ակադեմիական հատոր հրատարակութիւններ էին լոյս տեսնում։

«Բնաշխարհիկ Բառարան» ասելով չը պէտք է հասկանալ այն տեղերի բառարանը, որոնք Հայաստանում են գտնվում։ Ո՛չ. բառարանի մէջ մտնում են եւ այն բոլոր տեղերը, ուր հայը ոտք է դրել իր դարաւոր թափառումների ժամանակ։ Այսպէս, դուք այս բառարանում գտնում էք եւ «Անգլիա» բառը։ Այդտեղ Մեծ Բրիտանիայի մանրամասն կամ համառօտ տեղագրութիւնը չէք գտնում դուք, այլ տեղեկութիւններ այն մասին, թէ հայերը Անգլիայում երբ են եղել, ինչ վաճառականութիւն էին անում, ինչ անուններ են թողել եւ այլն։—Ահա թէ որքան լայն ծրագիր է վերցրել Հ. Էփրիկեան։

Գալով հայաբնակ տեղերի նկարագրութեան, մենք այստեղ տեսնում ենք նոյն իսկ աննշան գիւղերի անուններ, ի հարկէ, այն անունները, որոնք կարող էին յայտնի լինել Վենետիկում

մեր դատարկ անցնում էին, ծխականները չէին գալիս, ժողովները կամ չէին կայանում կամ սկսվում էին ուշ, այնպէս որ շատերը չէին կարող սպասել վերջին եւ հեռանում էին։

Այդ դեռ ոչինչ։

Ժողովներում տիրում էին անկարգութիւններ. ոչ օք ոչ ոքին չէր լսում. տիրապետում էր լրբութիւնը, ծայրայեղ լրբութիւնը, ամօթ, սահման չունեցող։ Մէկը խօսում էր, միւսը ընդհատում էր նրա խօսքը։ Մի փոքրիկ խումբ ամբողջ ժողովրդի իրաւունքը ձեռքն էր առել եւ յետոյ ոտքի տակ դրել։ Ազնիւ եւ խոհեմ մարդիկ սկսեցին հեռանալ ժողովներից, չը մասնակցել։

Մի խօսքով ամբոխը տիրապետում էր։

Պէտք է ջոկել ամբոխը ժողովրդից։

Պահպանեցէք ժողովրդի շահերը, բայց մի հետեւէք ամբոխին։

Ամբոխը Ֆրանսիային տուեց Նապոլէօն III. ամբոխը ուրիշ բան չը գիտէ. նա միայն լիզում է ձեռքեր, ոտքեր մեծ եւ փոքր բռնակալների։

Այժմ ժողովուրդը կը տիրապետէ. մինչ պատգամաւորները ժողովրդի ներկայացուցիչներ չեն։

Ճշմարիտ է, ժողովուրդը կը լսէ բոլորին, այդ օգտաւէտ չէ այն պարոններին, որոնք շլացնում են ամբոխի աչքերը, ստում են, եւ շնորհիւ ստի, կեղտի, դեր են խաղում։

Այդ պարոնների թագաւորութիւնը վերջացաւ։

Ցաւում ենք։

Ոչ։

Այժմ աղաղակով կարելի չի լինի փակել արդարութեան ձայնը։ Թող հեռանայ ամբոխը եւ նրա բռնակալները ու ստրուկները նրա հետ. տեղ տուէք ժողովրդին, ժողովրդի համբերութիւնը վերջացաւ, ժողովուրդն էլ ցանկանում է խօսել։

Գր. Զալիսուչեան

ՆՈՐ ՄԱՑՐԵՐԸ

(Նամակ Բաթումից)

—

Ցայտնի է, որ մայրերից շատերը, ի հարկէ, մեծ մասամբ ունեւորներից, իրանց հանգստութիւնը չը խանգարելու համար, մի-մի էլ զանազան հանգամանքներից ստիպված, իրանց նորածին մանուկների համար ծծմայրներ են վարձում։ Դրանից առաջացած վնասների մասին արդէն հազարաւոր անգամ գրվել է թէ լրագրութեան մէջ եւ թէ առանձին գրքոյկներով։ Եւ սակայն, չը նայելով այդ բոլորին, ոչ միայն չէ նուազում այդ տգեղ ու սպանիչ սովորութեան չափը, այլ, ընդհակառակն, գնալով աւելի ընդարձակ ծաւալ է ընդունում։

Եւ իրաւ, ինչը կարող է աւելի տխրեցուցիչ լինել, քան այն, որ այդ սառնասիրտ մայրերը, ընտելանալով իրանց մանուկների խնամքը օտար եւ տգէտ ծծմայրների ձեռքը յանձնելու մտքին, այժմ էլ տնտեսութեան համար սկսել են ոչ թէ վարձով նրանց բերել տալ իրանց մօտ, այլ մանուկներին տանել եւ շրջակայ գիւղերում աւելի ձեռնտու պայմաններով սրբան-նրան տալ պահելու համար։

Եւ ահա, երկու-երեք տարուց յետոյ, երեխան վերադարձնվում է նիհար, մաշված, որբ մնացած երեխայի պէս, կոչտ ու կոպիտ, խորթ մօր ճնշումների կնիքը ճակատին։ Հարազատ մայրը երեխային տեսնելուն պէս մնում է ապշած. մինչեւ իսկ նա սկսում է խորշել, յետ քաշվել, չը հաւատալով, որ դա իր առաջվայ սիրած մանուկն է։ Նա թէեւ ընդունում է երեխային, բայց իր սիրտը չէ կպչում նրան, այլ եւս չէ կարողանում սիրել նրան մայրական սիրով։ Երեխային նոյնպէս խորթ է թւում այդ տարօրինակ փոփոխութիւնը եւ նա մնում է չուարած եւ ապշած, առանց կարողանալու որոշել, թէ ո՞րն է արդեօք իր մայրը—առաջինը, թէ վերջինը։ Երկուսի մէջ երեխան մի տեսակ սառնութիւն է նկատում դէպի իրան եւ ինքն էլ նոյնն է զգում դէպի նրանց։ Չեն սիրում իրան, ինքն էլ չէ սիրում, չեն փայփայում, չեն գուրգուրում իրան, ինքն էլ չէ հրապուրվում։ Եւ այդ բոլորը գնալով հետզհետէ տխուր ձեւեր է ընդունում։ Մայրը սկսում է աւելի պահանջող լինել, սկսվում են ծեծը, անխիղճ պատիժները...

Այս բոլէին մեր աչքի առաջ բազմաթիւ օրինակներ կան մեր այս պատմածները հաստատելու համար։—Հարուստ մայրերից մէկը իր վեց երեխաներից 3—4 տարեկան մէկին, որ նոյնպէս գիւղում ուրիշի մօտ էր մեծացրել, սկսում է ատել եւ այնքան տանջանքներ տալ, այնքան պատիժների ենթարկել, որ դաստիարակչուհին (ֆրանսուհի), երկար դիմադրելուց յետոյ, երբ ոչ մի հնար չէ գտնում նրա անզթութիւնը զսպելու, ստիպված է լինում հեռանալ այդ տանից եւ յայտնել թէ քննիչին եւ թէ պրոկուրորին, որոնք անմիջապէս ուշադրութեան են առնում եւ քննութիւն սկսում։ Թէ ըժիշկների եւ թէ բաղմաթիւ վկաների միջոցով հաստատվում է անգութ մօր վայրենի եւ անխիղճ վերաբերմունքը դէպի իր հարազատ զաւակը։ Վճռվում է բանտարկել տալ, բայց 2,000 ռուբլի գրաւականով այժմ ազատ է թողնված, իսկ գործն իր կարգով շարունակվում է եւ այժմ Քութայիսի նահանգական դատարանում է։

Անտարակոյս է, որ արդարութիւնը կը կատարէ իր անողոք դատաստանը եւ, ի զգուշութիւն ուրիշների, բռնակալ մայրը կը ստանայ իր արժանի պատիժը։

Չը պէտք է մոռանալ ասելու, որ այդպիսի դէպքեր մեծ մասամբ տեղի են ունենում հրէաների մէջ, որոնց կրօնական զգայմունքը աւելի դժուար է հաշտվում այն հանգամանքի հետ, որ իրանց երեխան քրիստոնեայ ծծմօր մօտ է մնվել։ Անտանելի է լինում նրանց համար մանաւանդ այն, որ կրօնամոլ գիւղացի կանայք (վրացի) սկսում են երեխային աչքը բանալուն պէս երեսին խաչակնքել եւ այլ քրիստոնէական բաներ սովորեցնել, որոնց անգիտակցաբար կրկնում է խեղճ երեխան նաեւ իր ոչ-քրիստոնեայ մօր մօտ։

Ինչով կարելի է այս ցաւալի երեւոյթի առաջն առնել։ Ահա հարց։ Թող մտածեն։

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 19-ին

Այսօր տ. Սիրանոյշի խումբը խաղաց «Պէպօն»։ Չը նայած, որ «Պէպօն» Երեւանի բեմի վրա ներկայացնվում էր ով գիտէ քանիերորդ անգամ, բայց եւ այնպէս դահլիճը լի էր հասարակութեամբ։ Ներկայացումը կրում էր յօբելեանական բնաւորութիւն. ներկայացման վերջում «Պէպօի» հերոսները պիտի պակէին հեղինակին նրա գլուխ գործոցի երեսնամեակի առիթով եւ Երեւանի հասարակութիւնը շտապել էր իր յարգանքը արտայայտելու տաղանդաւոր դրամատուրգին։

Վարագոյրը բարձրանում է. նոյն ձկնորսի աղքատիկ խրճիթը, նոյն թշուառ Կէկէն ու Շուշանը, նոյն ծանր Գիքօն եւ իր ճակատի քրտինքով ապրող Պէպօն, նոյն կեղեքիչ Ամրոթին աղան եւ պիկնիկների քամակից ընկած թեթեւսոլիկ Էփէմիան։ Մի խօսքով նոյն աղքատիկ տեսարանները եւ փոքրիկ մարդիկ. բայց որքան հարազատութիւն է բուրում այդ բոլորից։ Դրանք մերն են, մեր սեփականը, մեր ազգայինը, մեր հալալ աշխատանքով ապրող կինտօն, հարատահարող ու կեղեքիչ աղան, հաւատարիմ եւ անարատ Գիքօն, մի խօսքով մեր հարազատ տիպերը, մեր չարն ու բարին, մեր վէրքերն ու խոցերը, նրանց սպեղանիները, մեր ապականութիւնն ու մեր սրբութիւնները։ Ահա թէ ինչով է Սունդուկեանցը մեզ այնքան ոգեւորում։

Խաղը թոյլ անցաւ. պ. Պետրոսեան լաւ Պէպօ չէր, պ. Է. Տէր-Գրիգորեան, որպէս սիրող, առաջ աւելի լաւ էր կատարում Գիքօի դերը։ Տ. Փառանձեմ Էփէմիայի դերը կատարեց շատ լաւ, իսկ պ. Վրոյրը Ամրոթին աղայի դերը աւելի լաւ կատարեց, եւ եթէ չը լինէին այս երկուսը, խաղը բոլորովին վատ կանցնէր։ Կարգապահութիւնը բացակայում էր դահլիճում եւ թէ բեմի վրա։ Որ մեր հասարակութիւնը անկարգ է, դրա մասին աւելորդ է խօսել, որ իրան պահել չը գիտէ, որ նա կը մտնի եւ տեղ կը պահանջէ նոյն իսկ խաղի տաք ժամանակ, այդ նոր բան չէ. բայց ինչ անուն տանք, երբ վարագոյրը բարձրանում է եւ խաղը սկսվում, այդ նոր բան չէ. բայց ինչ անուն տանք, երբ վարագոյրը բարձրանում է եւ խաղը սկսվում, երբ դահլիճը դեռ եւս դատարկ է անտրակտի ժամանակ։ Աւելի վատ էր, որ ներկայացման վերջում վարագոյրը բարձրացաւ առանց մի խօսք ասելու «Պէպօի» հեղինակի մասին. դերասանները պակեցին Սունդուկեանցի պատկերը եւ երբ նորից վարագոյրը իջաւ, երաժշտութիւնը սկսեց նուագել, բեմի առաջ բերվեց կենդանի ծաղիկներից մի պակ եւ ժողովուրդը երկար սպասում է նորից վարագոյրի բարձրանալուն։ Ցանկարծ լսում էք, որ ամեն բան վերջացած է. երկուսից մէկը—կամ խումբը չունի բէժիսոր եւ կամ ունի միայն անունով. երկու դէպքում էլ, այդ նշանակում է արհամարհել հասարակութիւնը։ Ժողովուրդը ցրվեց սառն տպաւորութեան տակ։

«Պէպօի» ներկայացման սկզբում տ. Սիրանոյշ կատարեց «Օրլէանի կոյսի» նախերգանքը գեղեցիկ կերպով։

Երիտասարդութիւնը մի շնորհաւորական հեռագիր ուղարկեց Սունդուկեանցին։

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մայիսի 12-ին

Մեր հայոց թատրոնական աշխարհում այս տարի քիչ թէ շատ կենդանութիւն է նկատվում. այս բանին, ի հարկէ, շատ նպաստեցին Արտիստական ընկերութեան թատրոնի նոր շինութիւնը, տ. Սիրանոյշի եւ պ. Պետրոսեանի քիչ թէ շատ բաւարար խմբի ներկայացումները եւ վերջապէս «Պէպօի» երեսնամեակը։ Ժողովուրդը նախկին տարիների նման սառնութեամբ չէր վերաբերվում դէպի մայրենի բեմը եւ ուրախութեամբ յաճախում էր ներկայացումներին. նոյն իսկ եղան ներկայացումներ, երբ ժողովուրդը ամբողջապէս լցնում էր թատրոնը—մի երեւոյթ՝ որ վաղուց է մեր հայոց թատրոնը չէր տեսել։ Մամուլի մէջ եւ զանազան շրջաններում սկսեցին լուրջ կերպով մտածել եկող տարվայ համար կոմիտէտ կազմել կանոնաւոր եւ մշտական խումբ պահելու. ի հարկէ այս ամենը չէր կարող ուրախութիւն չը պատճառել մեր բեմի նախանձախնդիրներին եւ իսկական բարեկամներին։

Եթէ մեր այս յիշած երեւոյթները մի կողմից ստիպեցին մտածել մեր թատրոնական գործը լուրջ եւ տեւողական հիմունքների վրա դնելու, կենդանացնելու մասին,—տեսէք թէ միւս կողմից մեր հատ ու կտոր դերասանները՝ նոյն մարդիկ, որոնց համար մեր թատրոնի ապագան կեանքի եւ մահվան խնդիր պէտք է լինի, ինչ միջոցների են դիմում օգտվելու այն ժամանակաւոր աջողութիւնից, որ ունի ներկայումս մեր բեմը։

Համարեա ամեն շաբաթ, նոյն իսկ ամեն օր, մենք տեսնում ենք սիւներին կպցրած զանազան «ազդեր» եւ «յայտարարութիւններ», թէ այս ինչ դերասանը տալիս է կամ տալու է այս ինչ պիէսան եւ, ի հարկէ, անպատճառ արշինանոց տառերով գրած, որ ամենագլխաւոր դերը այդ յայտարարող դերասանն է խաղալու. եւ որպէս զի հասարակութեանը կարողանան հրապուրել՝ բարեմտօրէն յայտարարում են, որ մասնակցում են դերասանական խմբի անդամները եւ սիրողները, իսկ իսկապէս մասնակցում են դերասանական խմբից 1, 2 կամ շատ շատ 3 երկրորդական եւ երրորդական դերասաններ կամ դերասանուհիներ, իսկ մնացած դերակատարները հաւաքած զանազան սիրողներ են, որոնք կեանքի մէջ 2 կամ 3 անգամ հազիւ են բեմ դուրս եկել եւ չեն էլ իմանում նոյն իսկ բեմի վրա իրանց պահելու եղանակը։ Այսպիսի ներկայացումներ արդէն տուել են պ.պ. Գալֆայեան, Յովհաննիսեան, Երիցեան, Անդրանիկ, Յովհաննիսեան եւ հաստատ գիտենք, որ տալու են պ.պ. Տէր-Դաւթեան, տ. Զաբէլ եւ գուցէ ուրիշներ էլ գտնվեն։

Բնականաբար ամեն մի հետաքրքրվող պէտք է հարցնէ—արդեօք ինչ է այդ պարոնների նպատակը—հասարակութեան զարթնած պահանջին գոհացում տալը։ Ո՛չ եւ ոչ, հազար անգամ ոչ. այդ պարոնները կամ աշխատում են հասարակութեան տրամադրութիւնից օգտվելով մի մի ներկայացումներով մի քանի հարիւր ռուբլի փախցնել՝ ի հարկէ ձրի օգտվելով սիրողների ոյժերից, կամ թէ չէ կազմակերպված խմբի մէջ ոյժ եւ կարողութիւն չունենալով այժմեան ստանձնած առաջնակարգ դերը կատարելու (օրինակ Անդրանիկը՝ Ֆրանց Մօորի եւ Յովհաննիսեանը—Համլէտի), յանդգնութեամբ այժմս դուրս են գալիս նշանաւոր դերերում՝ ժողովրդին եւ մամուլին իրանց մասին խօսել տալու համար. այլ եւս նրանց փոյթը չէ, որ իրանց թոյլ եւ սիրողական ներկայացումներով կրկին կը սառեցնեն ժողովրդին մեր բեմից, կը հարստահարեն մեր թատրօնը եւ եթէ իսկապէս մի լուրջ կոմիտէտ է հիմնվել,—նրա համար մի ահագին դժուարութիւն կը յարուցանեն, մի նոր գործ կը ստեղծեն, այն է նորից կապել ժողովրդին բեմի հետ։

Մինչեւ այժմ, փառք Աստուծու, այս տարվայ տրված ներկայացումների տոմսակները (բացի տ. Մելիքեանի եւ օր. Վարդուհու ներկայացումներից) նախկին տարիների վաճառելու խայտառակ ձեւերին չեն ենթարկվել, բայց այժմ, ի հարկէ, այդ հին պախարակելի կարգերը նորից առաջ են գալու՝ որպէս զի այդ պարոնները կարողանան մի կերպ ժողովրդին թատրոն գրաւել, եւ այս գրում ենք ոչ թէ ենթադրութիւնների հիման վրա, այլ որովհետեւ արդէն գիտենք, որ այդ միջոցին դիմելու են, նոյն իսկ դրանցից մէկը մեզ առաջարկել է նրա տոմսակները տարածել։

Եթէ այդ պարոնների համար թանգ է մեր թատրոնի գործը, նրա ապագան՝ նրանք պարտական էին միանալու այդ մի քանի ներկայացումների համար եւ ընկերութիւն կազմելու եւ փոխանակ սիրողներին դիմելու, կարող էին ընկերութեամբ չը միացած միւս դերասաններին վարձով հրաւիրել (ինչպէս, օրինակ տ. Սիրանոյշ եւ պ. Պետրոսեան) եւ այդպիսով թէ ներկայացումները աւելի կանոնաւոր կը լինէին եւ թէ անսամբլը ուժեղ, եւ մի ներկայացման գնացողը երկրորդ անգամ էլ կը գնար։ Այդպիսով կօգտվէր թէ հասարակութիւնը եւ թէ իրանք դերասանները. իսկ քանի որ այդ միջոցին չեն դիմի մեր դերասանները՝ մնում է հասարակութեանը պատժել իրանց օգտին սիրողներով ներկայացումներ տուող դերասաններին, չը յաճախելով այդպիսի ներկայացումները։ Ամենաճիշդ եւ արդար դատաստանը դա կը լինի այդպիսիների համար։

Կ. Շիրինեան

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թագուհի-կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ծննդեան տօնի պատճառով, որ տեղի ունի այսօր, մայիսի 25-ին, «Մշակի» հետեւեալ համարը լոյս կը տեսնի կիրակի, մայիսի 27-ին։

—

Մեզ հաղորդում են, որ մասնագէտ Սօկոլով վերադարձել է Բաթումից եւ ուղեւորվել Ախալքալաքի գաւառը՝ ուսումնասիրելու վնասակար միջատներին։ Նրա հետ միասին ճանապարհ է ընկել եւ ադրօնոմ Ա. Սահակեան։ Հետաքրքրական է, թէ ինչ արդիւնք կը տայ առաջիկայ ուսումնասիրութիւնը։

—

Մենք առիթ ունեցանք տեսնելու մի բարեխիղճ կերպով կազմված հարուստ ալբոմ, որ ներկայացնում է արեւելեան դորգերի նմուշներ իրանց յատուկ ներկերով։ Ալբոմը արժէ 900 ռուբլի եւ կազմված է եւրոպական գորգագործարանների համար։ Նմուշների մէջ կան պարսկական, հնդկական, թիւրքական, կովկասեան, միջին-ասիական գորգանկարներ։ Այդ ալբոմը կազմում է Կովկասի տնայնագործական կոմիտեի սեփականութիւնը։ Կոմիտեը դիտաւորութիւն ունի կովկասեան գորգերի նկարներից կազմել յատուկ մի ալբոմ։

—

Մեզ հաղորդում են, որ ռուս գաղթականների համար նշանակված հողերի մեծագոյն մասը արդէն ստացել է մինիստրութեան կողմից հաստատութիւն եւ կարող են այժմեանից ծառայել նոր գիւղեր հիմնելու համար։ Այդ հողերի մի մասը մինչեւ այժմ չահագործվում էր տեղական անասնապահների կողմից իբրեւ արօտատեղ։

—

Մայիսի 23-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում քննվում էր պաշտօնաթող պօրուչիկ Յով. Զէյրանեանի, նրա կնոջ՝ Վիլհէլմինայի եւ Շուշի քաղաքի բնակիչ Յովսէփ Յովհաննէսեանցի գործը, որոնք մեղադրվում էին Թէհրանի ռուսական փոխատու բանկի գանձապահին սպանելու եւ բանկից 255,513 ր. 66 կ. եւ 24,532 թուման 7 ղրան եւ 10 չայի յափշտակելու մէջ։ Այդ գործը 1900 թւի դեկտեմբերի 20-ին քննվեց Բագուի նահանգական դատարանում, որը դատապարտեց մեղադրվող Զէյրանեանցին եւ Յովհաննէսեանցին տաժանակիր աշխատանքներին, առաջինին 15 տարով, իսկ երկրորդին 10 տարով, իսկ Զէյրանեանցի կնոջն արդարացրեց։ Դատաստանական պալատը հաստատեց Բագուի նահանգական դատարանի վճիռը։

—

Կովկասեան ցուցահանդէսին արժանաւոր կերպով մասնակցելու համար Քութայիսի Գիւղատնտեսական ընկերութիւնը կազմել է մի քանի մասնաժողովներ, որոնք պէտք է ձեռք բերեն տեղական արդիւնագործութեան նմուշներ, ժողովեն տեղեկութիւններ արհեստների դրութեան մասին, կազմեն ընդհանուր նկարագրութիւն եւ ընտրեն բացատրողներ, որոնք ցուցահանդէսի ժամանակ մանրամասն տեղեկութիւններ կը տան յաճախորդներին Քութայիսի նահանգի արդիւնաբերութեան մասին։ Քութայիսի ընկերութիւնը իր դիտաւորութիւնը գլուխ բերելու համար ստացել է Թիֆլիսի կենտրոնական ընկերութիւնից երկու հարիւր ռուբլի։ Միւս ծախքերը պէտք է հոգայ տեղական ընկերութիւնը տեղական միջոցներից։

—

«Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված է Կառավարչական Սենատի որոշումը մի հարցի վերաբերմամբ, որը սկզբունքային նշանակութիւն ունի։ Այդ հարցը հետեւեալն է. արդեօք ուղղափառ դաւանութեան պատկանող անձինք, որոնք կալուածքներ ունեն Լեհաստանի Թագաւորութեան մէջ, պարտաւոր են մասնակցել կաթոլիկ եկեղեցիների կառուցման ծախսերին։ Սենատը այն եզրակացութեան եկաւ, որ ուղղափառ դաւանութեան պատկանող անձինք պարտաւոր չեն մասնակցել այդ ծախսերին։

—

Ռուսաց միջնակարգ դպրոցի վերակազմութեան համար ներկայումս արդէն կազմված է մի յանձնաժողով, որը կը սկսի իր գործունէութիւնը ներկայ ամսի վերջը։ Ի ղեկավարութիւն յանձնաժողովի մի քանի ընդհանուր որոշումներ է մշակել նախապէս կազմված մի խորհրդակցութիւն ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ։ Այդ որոշումները հիմք կը ծառայեն յանձնաժողովի առաջիկայ աշխատանքների համար։ Այդ որոշումները հետեւեալներն են։ Մինչեւ այժմ գոյութիւն ունեցող կլասիքական եւ ռէալական միջնակարգ դպրոցների տիպը վերացվում է եւ յանձնաժողովը պէտք է մշակէ միակերպ միջնակարգ եւ հանրակրթական դպրոցի տիպ։ Վերակազմված միջնակարգ դպրոցում եօթնամեայ դասընթացք պէտք է լինի։ Մայրաքաղաքներում եւ մի քանի մեծ քաղաքներում, ինչպէս, օրինակ, Ռիգայում, Կիեւում, Վարշավայում, Օդեսայում, Խարկովում, Կազանում եւ Թիֆլիսում, կը թողնվի մի-մի գիմնազիա երկու հին լեզուներով՝ լատիներէնով եւ յունարէնով, բայց այժմեանից համեմատաբար պակասեցրած պրոգրամով՝ գիտական-լեզուագիտական ճանապարհ ընտրողների համար։ Բոլոր մնացած կլասիքական գիմնազիաները եւ ռէալական դպրոցները վերածվում են միակերպ հանրակրթական միջնակարգ դպրոցների, այնպէս որ յունարէն լեզուն բոլորովին արտաքսվում է դասաւանդութեան առարկաների թւից։ Առաջին երեք դասարանները կատարելապէս լրացած ընտաւորութիւն կը կրեն եւ մասամբ կը համապատասխանեն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան այժմեան քաղաքային չորս դասարանեան դպրոցների դասընթացքին։ Չորրորդ դասարանից սկսվում է երկճիւղութիւնը, այնպէս որ չորս վերջին դասարանների մի զուգընթացում կը դասախօսվի, ի միջի այլոց, եւ լատիներէն լեզուն, միւսում օրէնսգիտութիւն եւ երրորդում օտար լեզու, անգլիերէն։ Չորս վերջին դասարանների կլասիքական բաժանմունքն անցնողները իրաւունք կը ստանան մտնելու բոլոր բարձրագոյն դպրոցները, իսկ ռէալական զուգընթացն անցնողները իրաւունք կը ստանան մտնել բոլոր ընդհանուր եւ մասնագիտական բարձր դպրոցները, բացի համալսարանների իրաւաբանական եւ պատմա-լեզուագիտական ֆակուլտէտներից, ուր սակայն կարող են մտնել լատիներէն լեզուից լրացուցիչ քննութիւն տալուց յետոյ։ Յունարէն լեզուն պրոգրամից հանելու եւ լատիներէնը կրճատելու պատճառով ազատ մնացած ժամերը կը յատկացվեն բնագիտութեան եւ ռուսաց լեզուի, պատմութեան եւ աշխարհագրութեան աւելի լայն ծաւալով դասաւանդութեան։ Ի բաց առնելով արուեստները, այլ եւս գլխաւոր եւ երկրորդական առարկաներ չեն լինելու գիմնազիաներում եւ բոլոր առարկաների նշանակութիւնը հաւասարվում է։ Ցանձնաժողովը պէտք է աւարտէ իր պարապմունքները մինչեւ ներկայ տարվայ աշունքը եւ նրա մշակած յատակագծերը եւ պրոգրամները, օրէնսդրական կարգով հաստատվելուց առաջ, կուղարկվեն քննութեան համար համալսարանների եւ շրջանների հոգաբարձուների խորհուրդներին, քաղաքային դումաներին եւ զէմստվոներին։ Այդ հիմնարկութիւնների կարծիքները ստանալուց յետոյ կը ձեռնարկվի միջնակարգ դպրոցի ռէֆօրմի նախագծի վերջնական խմբագրութեան՝ Պետական Խորհրդի քննութեանն առաջարկելու համար։ Ցանձնաժողովը պէտք է նոյնպէս մշակէ նոր հիմքեր մեզ մօտ մասնաւոր նախաձեռնութիւն զարգացնելու համար միջնակարգ հանրակրթական դպրոցի կազմակերպութեան գործում։

—

Ի յիշատակ Ռիգա քաղաքի 700-ամեայ գոյութեան յօբելեանի՝ ներկայ տարվայ ընթացքում այնտեղ կը բացվի արդիւնագործական—արհեստագիտական ցուցահանդէս, որ, լրագիրների ասելով, մի առանձին հետաքրքրութիւն կը ներկայացնէ իր բազմազանութեամբ եւ չքեղութեամբ։ Ցօբելեանական ցուցահանդէսի հետ միասին կը կազմվի եւ Բալտեան նահանգների նկարիչների գեղարուեստական արտադրութիւնների ցուցահանդէս։ Նոյն ժամանակ տեղի կունենան եւ համաժողովներ զանազան հարցերի վերաբերմամբ։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Հաստատապէս լսեցինք, որ այսօր, մայիսի 21-ին, Պարսկաստանի Թաւրիզ քաղաքից մեր փոխանորդը հեռագիր է ստացել, որ այնտեղ Ատրպատականի առաջնորդ է ընտրվել ինքը՝ Եղիշէ վարդապետ Մուրադեանը։»

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Անցեալ անգամ հաղորդել էի, որ քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու ժամանակաւոր երէցփոխ Ա.ր. քահ. Ղազէզեանի հրաժարականի պատճառով, մայիսի 14-ին նոր երէցփոխի ընտրութիւն էր նշանակված։ Սակայն այժմ, ինչպէս տեղեկացանք, կոնսիստորիայի հրամանով այդ ընտրութիւնը յետաձգված է անորոշ ժամանակով, իսկ երէցփոխական պաշտօնը ժամանակաւորապէս յանձնված է կրկին ծխական քահանաներից մէկին։ Հոգեւոր կառավարութիւնը, ինչպէս լսեցինք, իր կողմից պատասխանել է, որ ազատ եւ յարմարաւոր քահանաներ չը կան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, ապրիլի 30-ին

Ժողովրդի այնքան գեղեցիկ յոյսերը ի դերեւ ելան։ Արիստակէս եպիսկոպոսը հրաժարվեց իրան առաջարկված պաշտօնից։ Ժողովրդի բաղձանքը, նրա ցանկութիւնը—իր թեմի վրա մի գործունեայ հովիւ տեսնելու—չիրագործվեց։ Պարզեմ մի կէտ, որ անցեալ թղթակցութեանս մէջ զանց էի արել։ Սկզբում պատգամաւորների կէսը ցանկութիւն ունէր ընտրել ներկայ, թեմակալութիւնից հրաժարված Այվազեան եպիսկոպոսին, իսկ միւս մասը՝ Ց. եպիսկոպոս Սարաճեանին. մի կամ երկու ձայն տարբերութիւն կար այս կամ այն կողմում եւ պարզ բան է մի ձայնի առաւելութեամբ թեմակալ ընտրել միտք չունի։ Մի քանի նախապատրաստական ժողովներից յետոյ պատգամաւորները, փոխադարձ համաձայնութեամբ, որոշեցին թողնել երկու ընտրելիներին էլ եւ մի ուրիշին ընտրել, որի ընտրութիւնը ցանկալի լինի թէ այս եւ թէ այն կողմի համար։ Այդպիսով միաձայն ընտրեցին Արիստակէս եպիսկոպոսին։

Նոր ընտրութիւն կը կայանայ, ուստի կընտրեն, ուր է մի արժանաւոր հոգեւորական, ուր է մեզ համար մի հովիւ. մէկ Արիստակէս եպիսկոպոսն էր, նա էլ հրաժարվում է։ Ինչպէս ժողովուրդը, նոյնպէս պատգամաւորների մեծամասնութիւնը ծանօթ չէ մեր հոգեւորականութեան, չէ ճանաչում նրան, չը գիտէ արժանաւոր եւ գործունեայ հովիւներին։ Այդ կողմից թերացաւ մեր ժամուլը, որի պարտքն էր Վեհափառի տուած արտօնութեան լուրը ստանալուց յետոյ ցոյց տալ պարսկահայերին արժանաւոր հոգեւորականներ, իբրեւ թեմակալներ, մատնանիշ անել նրանց բարեմասնութիւնները, խորհուրդ տալ։ Այդ, եթէ ոչ շատ, գէթ մի որոշ չափով, կը նպաստէր մտքերը պատրաստելուն եւ ծանօթացնելով մեր ժողովրդին արժանաւոր հոգեւորականների հետ, միջոց կը տար ընտրել այդպիսիներից։ Այսուհետեւ մենք չունենք այդպիսի ձեռնհաս անձինք, որ այդ թերին լրացնեն, մենք ծանօթ չենք մեր հոգեւորականութեան լաւ անդամների հետ, պէտք էր մեզ ցոյց տալ դրանց։

Ցայտնի բան է, կրկին պիտի ընտրութիւն կայանայ եւ ժողովուրդը նկատի առնելով անցեալ աջող ընտրութիւնը—ինչ հանգամանքներում էլ կայացած լինի, այդ այնքան նշանակութիւն չունի—վստահ է, թէեւ ոչ ամբողջողովին, որ պատգամաւորները ժողովրդի չաներն ի նկատի առնելով, այս անգամ էլ աջող ընտրութիւն կը կայացնեն եւ նրա վստահութիւնը կարդարացնեն։ Ատուած տայ այդպէս լինի։

Ֆարրօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական ակադէմիայի «անմահների» շարքը մտան մարկիզ դէ-Վոգիւէ եւ Էդմոնդ Ռոստան։

—Լիսնում տեղի ունեցած երկպառակութեան պատճառով, 12 սոցիալիստ պատգամաւորներ դուրս եկան պարլամենտական սոցիալիստների խմբի կազմից։

—Բերլինից հեռագրում են, որ Վիլհելմ Բիսմարկի մահը մեծ տպաւորութիւն չը գործեց։ Հանդուցեալը չէր ժառանգել հօր ընդունակութիւնները եւ միայն արտաքին նմանութիւն ունէր նրա հետ։

—«Ռէյտերի գործակալութեան» կ. Պոլսից ստացած մի երկար թղթակցութեան մէջ հաղորդված են մանրամասնութիւններ Գերմանիայի տարօրինակ ընթացքի մասին օտար պօստատների համար եղած վէճի ժամանակ։ Դեռ սկզբից գերմանական դեսպանութիւնը ամենից խիստ լեզուով էր դատապարտում Թիւրքաց կառավարութեան ընթացքը, եւ գերմանացիները առաջինն էին, որ վերադարձրին Բ. Դրանը նրա յայտագիրը, որով Բ. Դուռը բողոքում էր օտարազգի պօստատների մի քանի գործողութիւնների դէմ։ Այն ինչ, իր ընկերակիցների հետ խորհրդակցութիւնների ժամանակ, բարոն Մարշալ յետաձգում էր ամեն մի կտրական քայլ, պատճառ բերելով այն, թէ հրահանգների է սպասում Բերլինից։ Վերջապէս հրահանգները ստացվեցին, եւ նոյն օրն եւ եթ Թիւրքայ արտաքին գործերի մինիստր Տէվֆիկ-փաշա եկաւ չորս դեսպանների մօտ եւ բացատրեց, թէ պօստային ծրարների բռնելը մանր պաշտօնեաների սխալմունքի հետեւանք էր... Բարօն Մարշալ յայտնեց, թէ ինքն բաւարար է համարում այդ բացատրութիւնը եւ թէպէտ բրիտանական, աւստրիական եւ ֆրանսիական դեսպանները անբաւարար էին գտնում այդ, գերմանական դեսպանը հրաժարվեց մասնակցելուց այն յայտագրի մէջ, որով մտադրութիւն կար աւելի լիակատար բաւարարութիւն պահանջել։ Գերմանիայի հեռանալը եւրոպական կօնցէրտից կանգնեցրեց նրանց գործողութիւնները, բայց երբ միւս պետութիւնները վճռեցին առանց Գերմանիայի գործել, Բ. Դուռը անյապաղ ամեն ինչ զիջեց։ Գերմանիայի ընթացքի յանկարծակի փոփոխութեան պատճառը երկուս էր։ Նախ՝ պօստը բռնելու հետեւեալ օրը սուլթանը մի իրադէ ստորագրեց, որով ընդունվում էին Հայդէր-փաշայում ծովեզրեայ քարափ շինելու համար կատարած աշխատանքների յատակագծերը. այդ կօնցէսիան պատկանում է անատօլիական երկաթուղիների ընկերութեանը։ Երկրորդ՝ մայիսի 15-ին, այսինքն, երբ երկպառակութիւնը իր գագաթնակէտին հասաւ եւ պետութիւնները, դրանց մէջ եւ Գերմանիան, դիտաւորութիւն ունէին ուլտիմատումի պէս մի բան կազմել, հրատարակվեց երկրորդ իրադէն, որով հաստատվում էր այն ընկերութեան կանոնադրութիւնը, որը պէտք է աշխատէ երկաթուղիական ընկերութեան հաշուին։ Պէտք է նկատի ունենալ, որ գերմանական դեսպանութիւնը մէկ տարուց աւելի տքնում էր, որ այդ իրադէն հրատարակվի եւ մինչեւ անգամ առաջարկում էր տալ Թիւրքայ կառավարութեանը 150,000 ոսկի աւանս, բայց ամեն ինչ իզուր էր, որովհետեւ ազդեցիկ մարդիկ կտրական դիմադրութիւն էին ցոյց տալիս դաշնագրի մի քանի յօդուածներին։ Այդ կօնցէսիաները վարձատրութիւն էին այն բանի, որ Գերմանիան դուրս եկաւ պետութիւնների կազմից այն րոպէին, երբ նրա աջակցութիւնը էապէս անհրաժեշտ էր։ Թղթակիցը ի դէպ յիշում է, որ հայկական ռէֆօրմների ժամանակ եղած բանակցութիւնների միջոցին, Գերմանիան ոչ միայն դուրս եկաւ պետութիւնների կօնցէրտից կրիտիկական րոպէում, բայց դեռ հաղորդել էր սուլթանին դեսպանների մշակած եւ գաղտնի պահվող ռէֆօրմների նախագիծը։ Դրան վարձատրութիւն էին զանազան արտօնութիւններ, որոնք տրվեցին Գերմանիային։ Այս անգամ էլ դրա նման մի բան պատահեց. երբ Տէվֆիկ-փաշան եկաւ դեսպանների մօտ բացատրութիւն տալու, երեւաց, որ նա ծանօթ է պետութիւնների ուլտիմատումի բովանդակութեան հետ, որը դեռ հաղորդված չէր Բ. Դրան։

—Քիչ ժամանակ առաջ ֆրանսիական լրագիրներում երեւացին տեղեկութիւններ այն մասին, թէ գերմանական ֆինանսիստները, առանձնապէս Դրէզդէնի բանկը, գնում են «Figaro» եւ «Matin» լրագիրների բաժնեթղթերը՝ նպատակ ունենալով այդ ազդեցիկ լրագիրները ծառայեցնել գերմանական շահերին։ Մօտ օրերումս Պէրիվիէ, «Figaro»-ի աշխատակիցներից մէկը, իր խօսակցութեան մէջ «Patrie» լրագրի աշխատակցի հետ, հաստատեց հասարակութեան եւ մամուլի մէջ տարածված տեղեկութիւնները «Figaro»-ի եւ «Matin»-ի դրութեան մասին։ Նա յայտնեց, թէ 1899 թւից սկսած Դրէզդէնի բանկը յամառութեամբ գնում է «Figaro»-ի բաժնեթղթերը եւ թէ ինքը որոշել է չը հեռանալ «Figaro»-ի խմբագրութիւնից, որպէս զի մաքառէ օտար ազդեցութեան դէմ։ «Berliner Tageblatt»-ի Պարիզի թղթակիցը նոյնպէս խոստովանում է, որ գերմանական ֆինանսիստները գնում են Պարիզի լրագրի բաժնեթղթերը, բայց աւելացնում է, թէ նրանց վարմունքը միայն վնաս կարող է բերել գերմանական շահերին։ Դրէզդէնի բանկը, ընդհակառակը, հերքում է այդ տեղեկութիւնները եւ յայտնում է, թէ բանկը ոչ մի յարաբերութիւն չունի «Figaro» լրագրի հետ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

23 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 23-ին Պետերբուրգ վերադարձաւ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեւիչ։—Մայիսի 23-ին Մոսկվայից Պետերբուրգ վերադարձաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ Օգոստափառ Ամուսնու եւ Աղջկայ հետ։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հաղորդում է Պրէտորիայից. «Զէմստաուն մայիսի 20-ին անձնատուր եղաւ Կրոյցինգէրի զօրաբաժնին չորս ժամվայ կռուից յետոյ։ Քաղաքային պահապան զինուորները եւ քաղաքային կամաւորները յաղթվեցին, նախ քան կարողացան հասնել օգնական զօրքերը։ Անգլիացիների կորուստները. երեք սպանվածներ եւ երկու վիրաւորվածներ. բօէրների կորուստները, պէտք է, որ նշանաւոր լինեն։ Պաշարները գրաւել են բօէրները։ Բերդապահ զօրքը ազատ բաց է թողնված։ Եւ յանձնարարեցի Ֆրէնչին գործել Կապի գաղթականութեան մէջ։ Թշնամին յարձակում գործեց Դիկսօնի զօրասիւնի վրա 1200 մարդուց բաղկացած զօրաբաժնով կէմպի հրամանատարութեան տակ»։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ին հաղորդում են Օտտավայից, թէ անգլիական կառավարութիւնը շնորհակալութեամբ մերժեց Կանադայի կառավարութեան առաջարկը հարաւային Աֆրիկա մի նոր հեծելազօր գունդ ուղարկելու նկատմամբ, որովհետեւ անգլիական կառավարութիւնը այն կարծիքի է, թէ այժմեան դրութեան մէջ եւ գործող զօրքի այժմեան ոյժերը նկատի ունենալով, դժուար թէ անհրաժեշտութիւն կայ Կանադային դիմելու նոր զօրագունդ խնդրելով։

ՊԵԿԻՆ։ Տեանձինի դէպքը Գէզլի համարում է հարբեցողութիւնից առաջացած հասարակ կռիւ, ինչպէս յաճախ պատահում է բերդապահ զօրք ունեցող բոլոր քաղաքներում։ Այդ դէպքը չէ կարող խախտել անգլիական եւ ֆրանսիական իշխանութիւնների մէջ գոյութիւն ունեցող սրտագին յարաբերութիւնները։

ՏԵԱՆՁԻՆ։ Տակուի փողոցում տեղի ունեցած կռիւը սկսվել էր պանդոկում պատահած գժտութեամբ, որի ժամանակ միջամտել էր անգլիական ոստիկանութիւնը։ Կռիւը այնտեղից անցել էր փողոցը եւ այնքան սաստկացել, որ կուռողները սկսել էին գործ դնել հրձիգ եւ սառը զէնք. ֆրանսիացիներից սպանված են երկու հոգի եւ վիրաւորված՝ չորս հոգի, գերմանացիներից վիրաւորված են երեքը եւ անգլիացիներից՝ չորսը։ Այդ դէպքին չը պէտք է վերագրել ոչ մի քաղաքական նշանակութիւն։

ԲԵՐԼԻՆ։ Մայիսի 22-ին Վալդերզէէ «Berta» նաւով ճանապարհ ընկաւ Տակուից դէպի Կօբէ։

Առաջին ծովային բատալիօնը մայիսի 21-ին նաւ նստեց եւ ճանապարհ ընկաւ Տակուից։

ՊԵԿԻՆ։ Մեծ հրդեհ սկսվեց քաղաքի արգելված մասում։ Եւրօպացիները ու ամերիկացիները խիստ կերպով պահպանում են մուտքը դէպի քաղաքի այրվող մասը, ուստի նոր մանրամասնութիւններ առ այժմ անյայտ են։

ՏԵԱՆՁԻՆ։ Ընդհարման ժամանակ սպանված ֆրանսիական զինուորների թաղման ներկայ էին Վալդերզէէ եւ բազմաթիւ գերմանական պատգամաւորութիւններ։ Խիստ միջոցներ են ձեռք առնված, որպէս զի այլ եւս թիւրիմացութիւններ չը ծագեն զանազան պետութիւնների զօրքերի միջեւ։

ՀՌՕՄ։ Պապի լէյբ-բժիշկ Լապպոնի հերքում է այն լուրը, իբր թէ պապը երէկ ուշաթափվել է։ Պապի առողջութիւնը շատ լաւ է։

ՄՕՍԿՎԱ։ Լուրերին նայած, Սօլդատենկովը կտակել է Ռումեանցեվների թանգարանին իր պատկերադարանն ու գրադարանը եւ մեծ գումար է թողել նրանց զետեղելու համար։—Երրորդութեան տօնի օրը կայացած ծաղկատօնից բարեգործական նպատակների համար զուտ արդիւնք եղաւ 15,000 ռուբլի։

ԿԱԼԻՇ։ Սաստիկ մրրկալից եղանակից յետոյ, որ վնասեց կալիշեան երկաթուղու շինութեան աշխատանքներին, սկսվեցին ցուրտ ու անձրեւային օրեր։ Ցանքսերը դէպի լաւն են գընում։

ՎՕԼՕԳԴԱ։ Եղանակները տաք են. անձրեւներ են գալիս։ Խոտերի ու գարնանացանքների աճումը լաւ է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՑՏՆՈՒՄ Է

—

ԹԻՖԼԻՍ, Նուիրատու. Իզուր էք կարծում թէ մենք ձեզ պէս լաւ տեղեակ ենք այդ գործին։ Ո՛չ։ Հաշիւը, հանգամանքները ձեզ են յայտնի։ Բայց զարմանում ենք, որ դուք, փոխանակ հրապարակով պահանջելու, որ ցոյց տան թէ ուր են ձեր նուիրած փողերը, թաղնվում էք «նուիրատու» անուան տակ եւ ձեր անունը նոյն իսկ մեր խմբագրութեան չէք յայտնում։ Ներեցէ՛ք, եթէ ասենք ձեզ, որ կեղծ անունը չէ կարելի գործ ածել ամեն ժամանակ. կան դէպքեր, երբ պէտք է դուրս գալ, պահանջել։ Ինչից էք վախենում։ Մի՞թէ այնքան դժուար է պահանջել, որ Խաչատուր Աբովեանի արձանի համար հաւաքված փողերը յատկացվեն նրա թոռներին, որոնք այսօր կարօտ են օգնութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ. ծաղիկ է կտրում նոյնպէս և կիրակի, առաւօտեան ժամի 9—10.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ֆ. Առվանիցակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր ատեանում ներկայ տարվայ մայիսի 28-ին, ցերեկ. ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կառուցանելու հատ. 0,33×0,22 պագ. ս., երկարութեամբ 105,00 պագ. սաժ. բէտօնից կոյուղի չինելու, Միլիտինսկայա փողոցից սկսած Նիկոլաեվսկայա փողոցի վրայով, մինչեւ Խիթարովի տունը, 1950 ր. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը 9-ից մինչեւ 3 ժամը ցերեկվայ։

1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր ատեանում ներկայ տարվայ մայիսի 28-ին, ցերեկվայ ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կառուցանելու բէտօնից կոյուղի հատ. 20×14 վերշ. երկարութեամբ 32,00 պագ. սաժ. Վելիկօկնեաժեսկայա-Նաբերեժնայա փողոցից, Բուկսի տան մօտ, մի եւ նոյն փողոցով մինչեւ Միքայէլեան պերէուլոկ, 750 ր. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը, 9-ից մինչեւ 3 ժամը ցերեկվայ։

1—3

ԵՐԱԺԻՇՏ Ն. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

ՁԱՅՆԱԳՐԱԾ ՆՕՏԱՆԵՐԸ

Թիֆլիսում վաճառվում են «Վիրա» եւ Միրիմանեանի երաժշտական մագազիններում։

1—2

Լոյս տեսաւ

ՀԻՒՍԻՍԻ ԱՐԾԻՒԸ

Պատմական վէպ

Գինն է մէկ բուբլի առանց ճանապարհածախսի։ Դիմել Կենտրոնական գրավաճառանոց կամ հեղինակին՝ Тифлисъ, Дворянская улица № 6. Баграту Айвазянцу. Հեղինակին դիմողները ստանում են զիջումն։

1—3

Թախանձագին խնդրում եմ Ռուսաստանի եւ արտասահմանի հայերին ում յայտնի է Ալէքսանդրոպոլից արդէն մի տարի անյայտ հեռացած Արշակ Հաջիբաբեան Կարապետեանցի բնակութեան տեղը կամ ով նրա մասին որ եւ է տեղեկութիւն ունի՝ յայտնէ հետեւեալ հասցէով.

Тифлисъ, редакція «Мшакъ», Аршалуйсу Мхитаріянцъ.

5—12 Յարութիւն Կարապետեանց

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ ուսել է Գերմանիայի Վիլհէլմսդորֆի դըպրոցում, ցանկանում է մտնել Լէյպցիգի արհեստագիտական դպրոցը, ուր մի տարվայ մէջ պիտի սովորի գործնական ատաղձագործութիւն եւ ճախարակագործութիւն, Զրկված լինելով սեփական միջոցներից՝ նա իր յոյսը դրել է բարեգործների վրա։ Ուսման դասընթացքը պէտք է տեւէ մէկ տարի եւ կը պահանջէ ծախս 650 բուբլի։

5—5

ԲԺՇԿԱՊԵՏ

ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին տարիների նման ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պեատիգօրսկում) մայիս ամսից։

(հ. կ.) 8—10

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Ամսիս 16-ին մեկնում է կովկասեան հանքային ջրերը, որտեղ, նախկին տարիների պէս, կընդունէ հիւանդներին։

Հասցէն՝ Пятигорскъ, Верхній бульваръ, д. Карповой. 8—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագումի. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

16—100

ՈՒՍԱՆՈՂ-ԲԺԻՇԿ

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

Ընդունում է գերմաներէն լեզուն չիմացող հիւանդներին՝ ներկայացնելու նրանց պրոֆէսօրներին եւ բժշկական խորհուրդներ կազմելու։ Համաձայն է յուլիսի 15-ից ճանապարհորդել գերմանական կուրորտները։

Հասցէն՝ Berlin, Auguststrasse 93. Cand. med. Peter Kara-Mursa. (ո. կ.) 4—8

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ, ԱՐԻՍՏ. ԱՐՔ. ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄԵԱՆԻ եւ ՑԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ,

Մեծադիր պատկերները

Իւրաքանչիւր օրինակը 50 կ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“ Лорисъ-Меликовская, № 11, Галусту Галустяну. 2—3

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Վերադառնալով արտասահմանից՝ ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամատուած ծնօտների պրոթէզներ (протезы)։

Առաւօտեան 8—2 ժամը

Երեկոյեան 5—8 »

Հասցէն՝ Пушкинская ул. № 16, надъ магазиномъ Шадинова. 19—25

Կիրակի, մայիսի 27-ին

«ՄՈՒՇՏԱՑԻԴ» ԱՑԳՈՒՄ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութեան օգտին

տեղի կունենայ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

Երաժշտութեամբ, երգիչների մասնակցութեամբ, կոնֆէտտիով, ընծաներով եւ այլն։

Զբօսանքի սկիզբն է ժամը 3-ին կէսօրից յետոյ։ Մուտքի գինը՝ 20 կօպ.։ Երեխաներից 10 կ.։

4—4

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ծախվում են հետեւեալ գրքերը՝

Այվազեան Բ., Հիւսիսի արծիւը, պատմական վէպ, Թիֆլիս, 1901 թ. գ. 1 ր.
Աղաֆիրեան Գր. եպս., Կրօնական-բարոյական խորհրդածութիւններ աստուածսիրութեան, առաքինութեան եւ բարեգործութեան եռանդ արծարծելու համար, 10 հատոր, Վղրշ. գ. 2 ր.
Բարխուդարեան Յովհ., Մանկական խաղեր, գծագրված օրինակներով, Թիֆլիս, գ. 50 կ.
Գիւլամիրեան Սիմ., Կիլիկիա, գեղարուեստական նկարներով, Պետր. գ. 1 ր. 25 կ.
Դիկենս, Կեանքի դպրոցը, վէպ երիտասարդների համար, Թիֆլ. գ. 1 ր.
Կրպէ, Կարս քաղաք, Մոսկվա, գ. 60 կ.
Մուրադեան Մելք. եպս., Հովուական աստուածաբանութիւն, հոգեբուղխ գրուածք ամեն քրիստոնէի, Կ. Պոլիս, գ. 1 ր. 25 կ.
Զէսատէրտօնի ժառանգը, պատկերազարդ վէպ, Թիֆլ. գ. 1 ր.
Պեստալոցցի, Լինհարդ եւ Գերտրուդ, վէպ ժողովրդի համար, Թիֆլ. գ. 1 ր. 50 կ.
Պիեր Լոտի, Ուղեւորութիւն Զերնօգորիայում, Թիֆլ. գ. 10 կ.
Սարգսեան Ս., Ագուլեցոց բարբառը (զոկերի լեզուն), լեզուաբանական հետազօտութիւն, Մոսկվա, գ. 2 ր.
Տմբլաչի Խաչան, Տնզլաբազ եւ զուռնա-տմբլա, Բագու, գ. 40 կ.
Տէր-Աւետիքեան Նիկ., Կովկասեան հանքային ջրեր, Աբասթուման, Բօրժոմ, Պեատիգօրսկ եւ այլն, Թիֆլ. գ. 10 կ.
» Վերածնութեան դար, Թիֆլ. գ. 1 ր.
Փայտաչէն խրճիթից մինչեւ սպիտակ տունը, պատկերազարդ, Թիֆլ. գ. 60 կ.
Օդէսայի հայ ուսանողների աշխատ., Զօրջ Ստեփէնսօն՝ շոգեշարժ երկաթուղու հնարողը, Թիֆլ, գ. 1 ր.
Ֆրդուսի, Ռոստամ եւ Զոհրաբ, ամբողջ վէպ եւ հատուածներ Շահնամայից. Շուշի, գ. 60 կ.
Շուտով մամուլի տակից լոյս կը տեսնի Վ. Փափազեանի նոր գիրքը՝ «Պատմուածքներ» գ. 50 կ.
Զիւանի, Մէլիք-Շահ հէքիաթը 25 կ.։

Դիմել՝ Тифлисъ. Въ Центральную Книжную Торговлю. (ու. կ.) 1—2

Գ. Լ. ԿՈՒԶԱՆԵԱՆԻ ՊԱՆՍԻՕՆԸ

Յունիսի 10-ին տեղափոխվում է Բօրժոմ ամարանոցը։ Ցանկացողները իրանց որդիներին ուղարկել, կարող են դիմել մինչեւ յունիսի 7-ը, իսկ յետոյ պայմանների մասին տեղեկանալ դպրոցում։ Պարապմունքները ամառը չարունակվում են։ Աշակերտների ընդունելութիւնը ամեն օր։ Бебутовская ул., № 50. 1—6

ՊԱՏԱՀՄԱՄԲ ԾԱԽՎՈՒՄ Է

35,000 բուբլով, բանկի պարտքով, Բաթում քաղաքի հէնց կենտրօնում, երկու ամենագլխաւոր, բանուկ փողոցների անկիւնում, երեք յարկանի քարէ տուն, 24 սենեակներով եւ 4 մագազիններով։—Այդ տան մօտ ծախվում է մէկ ուրիշ տուն 25,000 բուբլով, բանկի պարտքով, քարէ երկյարկանի տուն, ներքնայարկերով, 26 սենեակներով եւ բոլոր պատկանելիքներով։—Այդ տները կառուցված են երեք տարի առաջ, տարեկան 11% զուտ արդիւնք են բերում։—Պայմանների համար դիմել Թիֆլիս, ատամնաբոյժ պ. Վօլֆզօնին։ (ո. կ.) 1—20

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱԻԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ամենքի, որ այդ ընկերութիւնը սկսել է իր գործունէութիւնը։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ գտնվում է Թիֆլիսում, Երեւանեան հրապարակում, Խարազովայի տանը։ 1—1

ՄԱՍՆԱՒՈՐ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ

ՅԱԿ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ

(Բագու, Թաթոսօվկայա փողոց)

Մայիսի 15-ից մինչեւ 28-ը կը լինի նոր մտնող աշակերտների քննութիւնը փոքր պատրաստական, մեծ պատրաստական եւ I դասարանները եկող 19⁰¹/₀₂ ուսումնական տարվայ համար։ Նախապատրաստական դասարանը ընդունվում են անգրագէտները առանց քննութեան։

Յունիսի 1-ից պրոգիմնազիայի պանսիօնը տեղափոխվում է սեփական ամարանոց՝ Սագարէջօ գիւղը, Թիֆլիսի գաւառում։ 4—6

М. 109486

Օճֆէկտի եւ շօկօլադի գործարան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են չաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-չաքար (պաղ-չաքար, леденецъ),

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։

Գրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմոնեանի, Զ. Ի. Սուլխանեանի, Զ. Գ. Պոպովի, Եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հաջի-Ռախմանովի պարսկական մագազինում, Պետրոի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆոն № 362։

26—100

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Мая 1901 г.

Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.